Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան ու նպատակները

1. Սույն օրենքը կարգավորում է հաշմանդամության սահմանման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, նրանց կրթության, աշխատանքային գործունեության, առողջության պահպանման, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:

2. Սույն օրենքի նպատակն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու արժանապատվությունը և ապահովել նրանց արդյունավետ սոցիալական ներառումը:

3. Սույն օրենքով նախատեսված իրավունքներն ու երաշխիքները տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող (Հայաստանի Հանրապետությունում համապատասխան կացության կարգավիճակ ունենալու ժամանակահատվածում), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վրա:

Հոդված 2. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն առնչվող իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապատության Սահմանադրությամբ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության 2006թվականի կոնվենցիայով, միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **հաշմանդամություն՝** առողջական խնդիրներ ունեցող անձանց ու շրջակա միջավայրի արգելքների փոխազդեցության հետևանք, որը խոչընդոտում է նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը

2) **հաշմանդամություն ունեցող անձ՝** անձ, ով ունի ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական ոլորտների երկարաժամկետ կամ կայուն սահմանափակումներ, որոնք, բախվելով տարբեր միջավայրային արգելքներին, խոչնդոտում են նրա՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին

3) **բժշկասոցիալական փորձաքննություն՝** անձի ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական ոլորտների սահմանափակումների և միջավայրային արգելքների փոխազդեցության գնահատման ու պահպանված աշխատունակության (երեխաների ակտիվության, մասնակցության և հատուկ կրթական կարիքների) աստիճանի հիման վրա հաշմանդամության սահմանում

4) **կենսագործունեություն՝** անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու, ինքնասպասարկման, ինքնուրույն տեղաշարժվելու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու, ուսումնառելու (երեխաների համար՝ խաղալու), հասարակական ու քաղաքական կյանքին մասնակցելու ունակությունների (կարողություններ) համակցություն

5) **սոցիալական ներառում՝** հաշմանդամություն ունեցող անձի հավասար ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին

6) **աշխատունակություն՝** աշխատանքի բովանդակության, ծավալի և ներկայացվող պահանջներին (կատարման պայմաններին) համապատասխան գործունեության իրականացման կարողություն՝ անձի կենսագործունեության սահմանափակման և միջավայրային գործոնների ազդեցության համատեքստում.

7) **աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողություն՝** անձի՝ նախկին մասնագիտական հմտություններն օգտագործելու կամ նոր մասնագիտական հմտություններ ձեռք բերելու կարողություն

8) **աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակում՝** անձի՝ նախկին մասնագիտական հմտություններն օգտագործելու կամ նոր մասնագիտական հմտություններ ձեռք բերելու կարողության լրիվ կամ մասնակի սահմանափակում

9) **հաղորդակցություն՝** սույն օրենքի իմաստով՝ խոսակցական, ժեստերի լեզվով, նշանների և տեքստերի պատկերման, Բրայլի, շոշափողական, ընթեռնելի տառերով տպագրության, ինչպես նաև մատչելի այլ տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ

10) **խտրականություն՝** սույն օրենքի իմաստով հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը հերքումն է այն փաստի, որ հաշմանդամություն ունեցող անձը, մյուսներին հավասար կարող է իրականացնել իր իրավունքները և հիմնարար ազատությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ ոլորտում

11) **միջավայր՝** սոցիալական և մշակութային պայմաններ՝ ներառյալ վերաբերմունք, ինչպես նաև ֆիզիկական շրջապատ, ուր անձն ապրում է, կրթվում, աշխատում, տեղաշարժվում և կազմակերպում իր անձնական կյանքը

12) **միջավայրի գործոններ՝** արտաքին պայմաններ, որոնք դրական կամ բացասական ազդեցություն են ունենում հաշմանդամություն ունեցող անձի կյանքի վրա

13) **խելամիտ հարմարեցումներ (շտկումներ)՝** հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և ուսուցման, աշխատանքի, հաղորդակցման, մշակութային, մարզական գործունեության և այլ մասնակցության ձևերի ապահովմանն ու դրանց կազմակերպմանը նպաստող պայմաններ և հարմարեցումներ, որոնք ստեղծվում են հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձի անհատական կարիքները

14) **հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնում՝** բժշկական, կրթական ու սոցիալ-հոգեբանական միջոցառումների համակարգ, որը հնարավորություն է տալիս անձին զարգացնելու կամ պահպանելու ֆիզիկական, մտավոր ու մասնագիտական ունակություններն ու կարողությունները և նպաստում է նրա սոցիալական ներառմանը

15) **վերականգնողական անհատական ծրագիր՝** հաշմանդամություն ունեցող անձի վերականգնմանը և սոցիալական ներառմանն ուղղված բժշկական, կրթական, սոցիալ-հոգեբանական և մասնագիտական վերականգնողական միջոցառումների ամբողջություն

16) **վերականգնման տեխնիկական միջոցներ և այլ օժանդակ պարագաներ՝** կենսագործունեության սահմանափակումների լրիվ կամ մասնակի հաղթահարման, փոխարինման (փոխհատուցման) համար նախատեսված հատուկ սարքեր և տեխնիկական միջոցներ

17) **սոցիալական կազմակերպություն՝** սոցիալական ուղղվածության կանոնադրական նպատակներ ունեցող իրավաբանական անձ, որը նպաստում է հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծմանն ու զբաղվածության ապահովմանը

18) **համընդհանուր դիզայն՝** միջավայրի, ծրագրերի, ապրանքների ու ծառայությունների դիզայն, որն առանց շտկումների և մասնագիտացված դիզայնի անհրաժեշտության, դրանք առավելագույնս օգտագործելի է դարձնում յուրաքանչյուր մարդու համար՝ չբացառելով օժանդակ հարմարանքների կիրառումը հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար

19) **սոցիալական պատրոնաժ՝** հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվող օգնականի, միջնորդի, անձնական ուղեկցողի, ընթերցողի և ժեստերի լեզվի թարգմանչի ծառայություն

20) **հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական բազային ծրագիր՝** պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող, հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող նվազագույն վերականգնողական միջոցառումների, մատուցվող ծառայությունների, հատկացվող տեխնիկական և օժանդակ միջոցների երաշխավորված ցանկ:

ԳԼՈՒԽ II.

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ խտրականության բացառումը,

2) հաշմանդամություն ունեցող անձի պատվի և արժանապատվության, անձնական կյանքի անկախության նկատմամբ հարգանքը,

3) հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող բոլոր գործողություններում հաշմանդամություն ունեցող երեխայի իրավունքների գերակայությունը,

4) հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի և նախապաշարումների բացառումը,

5) հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանություն որևէ շահագործումից և բռնությունից,

6) հասարակությունից մեկուսացման բացառումը,

7) հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավումը,

8) հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հարցերով զբաղվող կազմակերպությունների մասնակցության ապահովում նրանց կյանքին և կենսագործունեությանը վերաբերող քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացին՝ նրանց համար մատչելի եղանակով:

Հոդված 5. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման նպատակով մատչելի պայմանների, հավասար հնարավորությունների ու իրավական հիմքերի ապահովում՝ անկախ հաշմանդամության առաջացման պատճառից, բնույթից, ծանրության աստիճանից,

2) սոցիալական պաշտպանության տեսակների տրամադրում՝ ելնելով անձի աշխատունակության աստիճանից և անհատական վերականգնողական ծրագրով նախատեսված միջոցառումներից,

3) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումների հասցեականության ապահովումը,

4) հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն կյանքի, ընտանեկան կամ դրան մոտ միջավայր ապահովելու համար պայմանների ստեղծում,

5) հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեք կրթություն ստանալու անհրաժեշտ պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծում՝ անկախ հաշմանդամության առաջացման պատճառից, բնույթից, ծանրության աստիճանից,

6) աշխատաշուկայում հաշմանդամություն ունեցող անձանց հավասար և մատչելի մասնակցության ապահովում, մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի արդար, բարենպաստ և մատչելի պայմաններ ունենալու իրավունքի երաշխավորում,

7) հաշմանդամություն ունեցող անձանց համար բժշկական, կրթական, սոցիալ-հոգեբանական և մասնագիտական ծառայություններում բոլորի հետ հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ապահովում,

8) հաշմանդամություն ունեցող անձանց համար սպորտի և մշակույթի ոլորտներում հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում,

9) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական գործընկերության ապահովում,

10) հաշմանդամություն ունեցող անձի՝ բնակավայր, կրթություն, մասնագիտություն, աշխատանք, սոցիալական և բժշկական օգնություն, ինչպես նաև ապրելու կամ ինքնադրսևորվելու համար անհրաժեշտ միջավայր ազատ ընտրելու իրավունքի ապահովում,

11) հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքների բավարարմանն ուղղված համընդհանուր օգտագործման ապրանքների, ծառայությունների, սարքավորումների և շինությունների մատչելիության ապահովում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ օժանդակ սարքերի և աջակցող տեղեկատվական տեխնոլոգիաների, նրանց կարիքներին համապատասխան տեղեկատվական և հաղորդակցության միջոցների և ծրագրերի (միջոցառումների) ներդրման խրախուսում,

12) վերականգնողական ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում,

13) հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող համապատասխան անձնակազմի և մասնագետների ուսուցման, վերապատրաստման և վերարակավորման գործընթացի ապահովում, ինչպես նաև համապատասխան մասնագիտալան կրթության հաստատությունների ծրագրերում «հաշմանդամության հիմնախնդիրների և համընդհանուր դիզայնի» առարկայի ներդրման ապահովում,

14) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման բնագավառում միջազգային համագործակցության զարգացում:

ԳԼՈՒԽ III

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 6. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգը և կառավարումը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգը համալիր միջոցառումների ամբողջություն է, որն ընդգրկում է՝ առողջապահական, կրթական, վերականգնողական ծառայություններ, հաշմանդամություն ունեցող անձանց կարողություններին համարժեք աշխատանքային երաշխիքների տրամադրում, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ակտիվ ծրագրերին ներգրավում, հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության տրամադրում, կենսաթոշակների և նպաստների վճարում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մատչելի ու հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող համակարգի կառավարումը սոցիալական ներառման միջոցառումների պլանավորման, մշակման, պատասխանատվությունների ու լիազորությունների իրականացման և բաշխման, մոնիթորինգի և գնահատման ամբողջությունն է:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող գործընթացին մասնակցում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ոչ պետական կազմակերպությունները:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հոդված 7. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտի պետական քաղաքականության իրականացումը,

2) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ռազմավարական և տարեկան ծրագրերը,

3) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման բազային ծրագիրը,

4) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը,

5) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հաշմանդամության սահմանման չափանիշները,

6) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կառուցվածքը,

7) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սոցիալական ծառայությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող ֆիզիկական միջավայրի մատչելիությունն ապահովող պահանջները,

8) աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին,

9) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 8. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում լիազոր մարմնի իրավասությունները

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում լիազորած մարմինը օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) մշակում և իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման պետական քաղաքականությունը,

2) մշակում է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող ռազմավարական ծրագրերը և ապահովում (համակարգում) դրանց իրականացումը,

3) մշակում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման Տարեկան ծրագիրը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն,

4) պատրաստում է հաշմանդամության իրավիճակի մասին ամենամյա տարեկան զեկույցը և ներկայացնում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի քննարկանը,

5) մշակում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման բազային ծրագիրը և ապահովում դրա իրականացումը,

6) համակարգում և ապահովում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների գործունեությունը,

7) համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ,

8) կազմակերպում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի մասնագետների վերապատրաստումը,

9) աջակցում է հաշմանդամության հիմնահարցերի լուծմանն ուղղված գիտական հետազոտությունների իրականացմանը,

10) համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ,

11) ստեղծում և վարում է հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների շտեմարանը,

12) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

ԳԼՈՒԽ IV.

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 9. Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բացառումը

1. Արգելվում է ցանկացած խտրականություն՝ հիմնված հաշմանդամության հանգամանքի վրա: Խտրականության դրսևորում է համարվում նաև անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը:
2. Պետությունը երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և արդյունավետ օրինական պաշտպանությունը խտրականության և խարանի դրսևորումներից:
3. Օրենքով սահմանված այն դրույթները, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց համար իրական հավասարության հասնելու ու այդ գործընթացը արագացնելու համար, չեն կարող դիտվել որպես խտրականություն:

Հոդված 10. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովում

1. Տարածքային պլանավորման, սոցիալական ենթակառուցվածքների, շենքերի, շինությունների, հասարակական տրանսպորտի և նրանց շրջակա միջավայրի նախագծման, տեղեկատվական համակարգերի մշակման ժամանակ հաշվի են առնվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մատչելի միջավայր ապահովելու պահանջները: Մատչելի միջավայր ապահովելու պահանջները և չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
2. Շահագործված շենք-շինությունները, անկախ սեփականության ձևից, ենթակա են հարմարեցման հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ ապահովել մատչելիությունը, ապա ապահովվում են խելամիտ հարմարեցումները:
Սույն դրույթը կիրականացվի փուլերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներով:
3. Նոր կառուցվող սոցիալական ենթակառուցվածքների, շենքերի, շինությունների, հասարակական տրանսպորտի օբյեկտների և նրանց շրջակա միջավայրի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման պահանջների խախտումը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 11. Տեղեկատվության և հաղորդակցման մատչելիություն

1. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության, զանգվածային լրատվամիջոցների, տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային հաղորդակցման մատչելությունն ապահովում է լիազորած մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
2. Գործող ինտերնետային կայքերը, ինչպես նաև նոր նախագծվող կայքերը ենթակա են հարմարեցման՝ հաշվի առնելով համընդհանուր դիզայնի սկզբունքները:
3. Հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունները ապահովում են մանկական և լրատվական հեռուստահաղորդումների ժեստերի լեզվով թարգմանությամբ հեռարձակումը:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց համար, իրենց անհատական կարիքներից ելնելով, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրերի մշակումն ու տեխնիկայի կամ վերականգնողական պարագաների տրամադրումն իրականացնում են իրավասու պետական մարմինները:

Հոդված 12 . Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը

1. Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն ստանալու հանրակրթական (նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ, հատուկ) և մասնագիտական (նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական) կրթություն, ինչպես նաև զբաղվել գիտական գործունեությամբ՝ սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտը կարգավորող օրենքների դրույթներին համապատասխան:

2. Կրթության բնագավառում լիազորած մարմինը հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում է՝

1) ներառական, հասանելի և մատչելի կրթություն՝ կրթության բոլոր մակարդակներում,

2) կրթությունը ողջ կյանքի ընթացքում:

3. Բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում կազմակերպվող քննությունների կամ մրցույթի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովվում են խելամիտ հարմարեցումներ:

4. Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամություն ունեցող անձինք, հավասար պայմանների դեպքում, օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատվության իրավունքից:

5. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում՝ կրթական բոլոր մակարդակներում:

6. Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ և տրամադրվում է կրթաթոշակ:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքով տվյալ ուսումնական հաստատություն ընդունված և սովորող (ուսումնառող) անձանց կրթությունը և ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ:

8. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքերով պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն և «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքում չեն ճանաչվել հաշմանդամություն ունեցող անձ:

9.Պետական բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորողները, ուսումնառության ընթացքում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ստանալու դեպքում՝ տեղափոխվում են ուսումնական հաստատության անվճար ուսուցման համակարգ:

Հոդված 13. Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքը և զբաղվածության ապահովումը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքները, երաշխիքները և զբաղվածության ապահովման հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսդրությամբ, զբաղվածության մասին օրենսդրությամբ, սույն օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

2. Կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, սահմանվում է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (այսուհետ՝ քվոտա)՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար:

3. Քվոտայի պահանջը սահմանվում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական կազմակերպությունների համար՝ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 3 տոկոսի չափով:

4. Քվոտայի պահանջը սահմանվում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող ոչ պետական կազմակերպությունների համար՝ առնվազն 1 տոկոսի չափով:

5. Քվոտայի ներդրումից մեկ տարի հետո քվոտայի պահանջը սահմանվում է նաև հարյուրից պակաս աշխատողներ ունեցող կազմակերպությունների համար:

6. Քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական, ինչպես նաև հանրային ծառայության թափուր պաշտոնները քվոտայի պահանջով համալրվում են՝ հաշվի առնելով օրենքով նախատեսված պահանջները և առանձին պաշտոններ զբաղեցնող անձանց համար սահմանված սահմանափակումները:

7. Քվոտայի պարտադիր կիրառման վերաբերյալ տեղեկատվական բազաների ձևավորման և վարման, գործատուի կողմից զբաղվածության պետական ծառայություն դիմելու, զբաղվածության պետական ծառայության կողմից թեկնածու ընտրելու և գործատուին առաջադրելու, գործատուների կողմից քվոտայի պարտադիր պահանջի կատարման նկատմամբ մոնիթորինգի ու գնահատման կարգերը, ինչպես նաև թեկնածուին ներկայացվող պահանջների օրինակելի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Քվոտավորման ենթակա կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) առաջացած թափուր աշխատատեղերի վերաբերյալ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող համապատասխան անձով թափուր աշխատատեղը համալրելու մասին տեղեկատվությունը ներկայացնում է լիազորած մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

9. Թափուր աշխատատեղ առաջանալուց հետո մեկ ամսվա ընթացքում քվոտայի պահանջը չկատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ուղեգրված երկու և ավելի թեկնածուներին մերժելու դեպքում, կազմակերպությունը կատարում է մասհանում:

10. Մասհանումը կատարվում է քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի համար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

11. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված տեղեկատվությունը չներկայացնելը, ինչպես նաև մասհանումներ չկատարելը կազմակերպության նկատմամբ առաջացնում է օրենքով սահմանված վարչական պատասխանատվություն:

12. Կազմակերպության կողմից քվոտայի պահանջի և մասհանումների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը՝ օրենքով սահմանված կարգով:

13. Մասհանվող գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բացված արտաբյուջետային միջոցների հաշվին:

14. Մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են հաշմանդամների առողջական, սոցիալական, աշխատանքային, մասնագիտական վերականգնման, հաշմանդամների աշխատանքի տեղավորման, սոցիալական կազմակերպությունների ստեղծման, ինչպես նաև քվոտայի պահանջի կատարման ապահովման համար կազմակերպություններին պետական աջակցություն տրամադրելու նպատակներով:

15. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման և աշխատաշուկայում նրանց հետագա արդյունավետ ներառման նպատակով ստեղծվում են սոցիալական կազմակերպություններ:

Հոդված 14. Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական միջոցառումներն իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձի առողջության, աշխատունակության և սոցիալական վերականգնման նպատակով, որը նպաստում է նրա նյութական և սոցիալական անկախությանը, հասարակական կյանքին համակողմանի մասնակցությանն ու իրավահավասարությանը:

2. Հաշմանդամություն ունեցող անձի վերականգնումն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան:

Հոդված 15. Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական վերականգնումը

1. Բժշկական վերականգնումը ներառում է վերականգնողական բժշկական օգնությունը, պլաստիկ վերակառուցողական վիրաբուժությունը՝ տվյալ կամ հարակից օրգանի ֆունկցիայի խանգարման դեպքում, պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը: Բժշկական վերականգնման մեջ ներառվող բժշկական օգնության և սպասարկման տեսակները կազմակերպվում են ամբուլատոր կամ հիվանդանոցային ձևով՝ ներառյալ դրանց իրականացումը առողջարաններում:

2. Բժշկական վերականգնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության և սոցիալական պաշտպանության համակարգի պետական և համայնքային մարմինների, ապահովագրական և բարեգործական բժշկական կազմակերպությունների կողմից:

Հոդված 16. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական վերականգնումը

1. Մասնագիտական վերականգնումն ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատունակության վերականգնմանը և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև աշխատելու հնարավորության մեծացմանը:

2. Մասնագիտական վերականգնումը ներառում է մասնագիտական կողմնորոշումը, վերամասնագիտացումը, մասնագիտական հարմարվողականությունը և աշխատանքի տեղավորման գործընթացը:

3. Առանձնացվում են մասնագիտական վերականգմանն ուղղված հետևյալ հիմնական ծառայությունները՝

1) խորհրդատվության տրամադրում,

2) մասնագիտական կողմնորոշում,

3) մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատում ու վերականգնում,

4) որակավորման բարձրացման, վերապատրաստման և վերաորակավորման միջոցով նոր կարողությունների ու հմտությունների զարգացում,

5) աշխատատեղի հարմարեցում և աշխատանքի տեղավորում:

4. Մասնագիտական վերականգնմանն ուղղված ծառայությունների տրամադրման գործընթացը կազմակերպում է լիազորած մարմինը:

Հոդված 17. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական վերականգնումը

1. Սոցիալական վերականգնումը ներառում է սոցիալ-միջավայրային կողմնորոշումը, սոցիալ-կենցաղային հարմարեցումը, սոցիալ-հոգեբանական խորհրդատվությունը և հարմարեցումը, տեխնիկական միջոցներով ապահովումը, ինչպես նաև դրանց օգտագործման ուսուցումը:

2. Սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման նպատակն է վերականգնել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, ինչպես նաև ինքնուրույն ապրելու հմտությունները:

3. Վերականգնողական ծառայությունները նպաստում են հաշմանդամություն ունեցող անձի ինքնուրույն ապրելու հմտությունների պահպանմանն ու վերականգնմանը, նոր հմտությունների, ունակությունների ձեռքբերմանը, նրանց կրթություն ստանալուն, աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելուն, մշակութային, մարզական և այլ ունակությունների զարգացմանը, ինչպես նաև հասարակական այլ ոլորտներում մասնակցության հնարավորությանը:

4. Սոցիալական վերականգնողական ծառայությունների տրամադրման գործընթացը կազմակերպում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները:

Հոդված 18. Հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագիրը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի հաստատած, հաշմանդամների անհատական կարիքների վրա հիմնված վերականգնողական անհատական ծրագրով: Վերականգնողական անհատական ծրագիրը մշակվում է՝

1) առաջին անգամ հաշմանդամ ճանաչված բոլոր անձանց համար,

2) հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն:

2. Հաշմանդամություն ունեցող անձի համար վերականգնողական անհատական ծրագիրն ունի երաշխավորական բնույթ:

Հոդված 19. Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանումն ու վերականգնումը

1. Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Առանց հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, արգելվում է հաշմանդամություն ունեցող անձին առողջության վերականգնման նպատակով տեղափոխել, կամ պահել մասնագիտացված հաստատություններում կամ այլ վայրում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 20. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությունը

1.Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությունն իրականացվում են հետևյալ ձևերով՝

1) դրամական վճարումներ, այդ թվում՝
կենսաթոշակներ կամ նպաստներ, նպատակային վճարումներ և փոխհատուցումներ,

2) վերականգնողական ծառայությունների տրամադրում,

3) խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում,

4) իրավական և մասնագիտական խորհրդատվություն,

5) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական տեխնիկական ու այլ օժանդակ միջոցներով անվճար ապահովում,

6) սոցիալական պատրոնաժի տրամադրում,

7) բնակարանային պայմանների բարելավում՝ պետական ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկելու կամ սոցիալական բնակարանային ֆոնդում նրանց համար որոշակի չափաքանակ սահմանելու միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Բնակելի տարածքների բաշխման ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները հաշվի են առնում հաշմանդամություն ունեցող անձանց պահանջմունքները:

2. Սոցիալական պաշտպանության ձևերն ու ծառայությունները անձին տրամադրելու կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 21. Ազատազրկման վայրում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց երաշխիքները

1. Ազատազրկման վայրում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովվում են մատչելի պայմաններ:

2. Ազատազրկման վայրերում հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվում է իրավական, բժշկական, վերականգնողական ու սոցիալ-հոգեբանական օգնություն և անհրաժեշտ տեղեկատվություն ՝ իր համար մատչելի ձևով:

3. Ազատազրկման վայրում գտնվող անձանց բժշկասոցիալական փորձաքննության անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 22. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկումը և խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և տնային պայմաններում

1. Խնամքի ու սոցիալական սպասարկման անհրաժեշտության դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց խնամքն ու սոցիալական սպասարկումը տրամադրվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, իսկ 18 տարեկանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ նաև տնային պայմաններում:

2. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող և տնային պայմաններում սպասարկվող հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են կենցաղային սպասարկման ծառայություններ, առաջնային բժշկական օգնություն և սոցիալ-հոգեբանական ու իրավաբանական խորհրդատվություն:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման և խնամքի իրականացման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 23. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցներից օգտվելու մատչելիության ապահովումը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգում, որպես մրցութային պայման, պետք է ամրագրվի հաշմանդամների համար հարմարեցված տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը:

2. Տրանսպորտային ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից) պարտավոր են ապահովել տրանսպորտային միջոցների, կայարանների ու օդանավակայանների, տրանսպորտային միջոցների կանգառների և հետիոտնային անցումների մատչելիությունը, ինչը հնարավորություն

կտա հաշմանդամություն ունեցող անձանց առանց խոչընդոտների օգտվել այդ ծառայություններից:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային ծառայությունների մատչելիության ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն և «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձինք իրավունք ունեն անվճար երթևեկելու ընդհանուր օգտագործման տրանսպորտով (բացառությամբ ավտոբուսից (միկրոավտոբուսից) և մարդատար տաքսի ավտոմոբիլներից):

Հոդված 24 . Մշակութային, մարզական կյանքին մասնակցություն

1. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ստեղծվում են մատչելի պայմաններ՝ բոլորին հավասար օգտվելու մշակութային, մարզական, զբոսաշրջային կամ ազատ ժամանակի կազմակերպման այլ վայրերից, ինչպես նաև դրանցում կազմակերպվող միջոցառումներից և գույքից:

2.Մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպիչները հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսում են որոշակի քանակությամբ հարմարեցված տեղեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներով:

3. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները աջակցում և խրախուսում են հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը բոլոր մակարդակներում անցկացվող՝

1) մարզական միջոցառումներին՝ նրանցում ներառելով նաև պարալիմպիկ, սուրդլիմպիկ, հատուկ օլիմպիադաների (մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար) և տեսողության խնդիրներ ունեցող անձանց հետ անցկացվող մարզաձևերը,

2) մշակութային միջոցառումներին:

4.Մշակութային և մարզական շինությունների հարմարեցումները հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 25. Հաշմանդամության վիճակագրություն և տվյալների շտեմարանի ձևավորումը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման նպատակով լիազորած մարմինն ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների շտեմարանի ձևավորումը:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների շտեմարանի ձևավորման համար տեղեկատվության հավաքագրման և օգտագործման գործընթացում երաշխավորվում է էթիկայի սկզբունքների պահպանումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող տեղեկատվության գաղտնիությունը:

3. Հավաքագրված տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է լինի բաղդատելի, և օգտագործվի հաշմանդամության ոլորտի քաղաքականության մշակման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորման և առանձին ծրագրերի պլանավորման և իրականացման նպատակով:

4. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված տեղեկատվության հավաքագրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ V.

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հոդված 26. Բժշկասոցիալական փորձաքննություն

1. Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կայացնում են հետևյալ որոշումները՝

1) անձի կենսագործունեության սահմանափակման աստիճանի հիման վրա հաշմանդամության խմբի սահմանման վերաբերյալ,

2) անձի պահպանված աշխատունակության աստիճանի վերաբերյալ (տոկոսներով),

3) մինչև 18 տարեկան երեխաների համար «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակի և հաշմանդամության ծանրության աստիճանի սահմանման վերաբերյալ,

4) անձին հաշմանդամ չճանաչելու վերաբերյալ,

5) հաշմանդամության պատճառի վերաբերյալ,

6) հաշմանդամության ժամկետի վերաբերյալ,

7) մահվան պատճառական կապի վերաբերյալ,

8) ժամանակավոր անաշխատունակության թերթիկի երկարացման անհրաժեշտության վերաբերյալ:

3. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները որոշում են հաշմանդամություն ունեցող անձի, անհատական կարիքներին համապատասխան, սոցիալական միջոցառումների տեսակները, ձևերը և ծավալները, նրա և (կամ) նրա օրինական ներկայացուցչի մասնակցությամբ մշակում և հաստատում են հաշմանդամություն ունեցող անձի անհատական վերականգնողական ծրագիրը:

4. Անձի պահպանված աշխատունակության աստիճանը սահմանվում է 18-ից մինչև 63 տարեկան անձանց և 16-ից մինչև 18 տարեկան աշխատող երեխաների համար:

5. Բժշկասոցիալական փորձաքննության կարգը, հաշմանդամության սահմանման չափանիշներն ու հաշմանդամության սահմանման ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Հոդված 27. Անձին հաշմանդամություն սահմանելը

1. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինն անձին հաշմանդամություն սահմանում է սույն օրենքի պահանջներին, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված հաշմանդամության սահմանման չափանիշներին համապատասխան:

2. Անձին հաշմանդամություն սահմանվում է նրա առողջական խնդիրների հետևանքով առաջացած կենսագործունեության սահմանափակման և պահպանված աշխատունակության (երեխաների դեպքում՝ ակտիվության, մասնակցության և հատուկ կրթական կարիքների) աստիճանից ելնելով:

3.Անձի պահպանված աշխատունակության (երեխաների դեպքում՝ ակտիվության, մասնակցության և հատուկ կրթական կարիքների) աստիճանը սահմանվում է տոկոսներով:

4. Անձի պահպանված աշխատունակության աստիճանի վերաբերյալ որոշումն ընդունվում է բժշկական չափորոշիչների, ֆունկցիոնալ, մասնագիտական, միջավայրային, սոցիալական և աշխատունակության կամ նրա աշխատանքի տեղավորման վրա ազդող այլ գործոնների գնահատման հիման վրա:

5. 0-55 տոկոս պահպանված աշխատունակության դեպքում անձին նշանակվում է հաշմանդամության կենսաթոշակ և տրամադրվում են անհատական վերականգնողական ծրագրով նախատեսված ծառայություններ:

6. 60 տոկոս պահպանված աշխատունակություն ունեցող անձին տրամադրվում են անհատական վերականգնողական ծրագրով նախատեսված ծառայություններ, ինչպես

նաև տրվում է եզրակացություն՝ աշխատանքի պայմանների և բնույթի կամ նոր աշխատանքով ապահովելու վերաբերյալ:

7. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին սահմանվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ), իսկ մինչեւ 18 տարեկան երեխաներին՝ «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ՝ նշելով հաշմանդամության ծանրության աստիճանը:

8. Հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը կատարվում է՝ հաշմանդամության կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու կամ նրա առողջական վիճակը վատթարանալու և (կամ) պահպանված աշխատունակության աստիճանը նվազելու կամ նրա՝ փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ փորձաքննության իրականացման կարգի խախտման կամ հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշների խախտման կամ անձի պահպանված աշխատունակության աստիճանի (երեխաների ակտիվության, մասնակցության և հատուկ կրթական կարիքների, հաշմանդամության ծանրության աստիճանի) սխալ գնահատման դեպքերում կամ անձի և (կամ) նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն կամ դատական ակտի հիման վրա:

9. Անժամկետ հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը կատարվում է՝ նրա բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ բժշկասոցիալական փորձաքննության կարգի խախտման կամ հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշների խախտման կամ անձի աշխատունակության աստիճանի (երեխաների ակտիվության, մասնակցության և հատուկ կրթական կարիքների, հաշմանդամության ծանրության աստիճանի) սխալ գնահատման դեպքերում կամ անձի և (կամ) նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն կամ դատարանի որոշման հիման վրա:

10. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կայացրած որոշումները կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

11. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կայացրած որոշումները ուժի մեջ են մտնում անձին փորձաքննական որոշումից քաղվածք-տեղեկանք տրամադրելու հաջորդ օրը:

Հոդված 28. Հաշմանդամության պատճառները

1. Հաշմանդամության պատճառ կարող են լինել՝

1) մանկուց հիվանդությունը,

2) ընդհանուր հիվանդությունը,

3) աշխատանքային խեղումը կամ վնասվածքը,

4) մասնագիտական հիվանդությունը,

5) բնական, տեխնածին և այլ աղետները, ինչպես նաեւ դրանց վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,

6) Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի և այլ ճառագայթային աղետների վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,

7) Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,

8) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,

9) զինվորական ծառայության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,

10) զինվորական պարտականությունները կատարելիս ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,

11) օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքեր:

ԳԼՈՒԽ VI.
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 29. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Ազգային հանձնաժողովը և նրա գործունեության նպատակները

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

2. Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որը գործում է սույն օրենքին և իր աշխատակարգին համապատասխան:

3. Հանձնաժողովի նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է:

Հոդված 30. Հանձնաժողովի խնդիրները և գործառույթները

1. Հանձնաժողովն օրենքով և իր աշխատակարգով սահմանված կարգով՝

1) ուսումնասիրում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գործընթացի վրա համապատասխան իրավական ակտերի ներգործության աստիճանը և կիրառելիությունը,

2) վերլուծում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ մշակում առաջարկություններ, որոնք հանձնաժողովում քննարկվելուց հետո ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարություն,

3) մշակում է առաջարկություններ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ռազմավարությունների, տարեկան ծրագրի, հաշվետվությունների և դրանց կատարումն ապահովող այլ փաստաթղթերի վերաբերյալ,

4) առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ,

5) իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման և դրանց իրականացման գործընթացի մոնիթորինգ,

6) քննարկում է հաշմանդամների իրավունքների և ազատությունների խախտմանը վերաբերող խնդիրներ և առաջարկություններ,

7) աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցության աշխատանքները,

8) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տարեկան ծրագրի նախագիծը, ինչպես նաև նախորդ տարվա տարեկան ծրագրի կատարման հաշվետվությունը և տալիս առաջարկություններ, որոնք հանձնաժողովում քննարկվելուց հետո ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարություն,

9) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց կամ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումները,

10) համագործակցում է պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, գիտական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ,

11) իրականացնում է աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 31. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

2. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և հավասար թվով ներկայացված՝ հաշմանդամության ոլորտում շահագրգիռ, պատասխանատու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները (համաձայնությամբ): Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև Ազգային ժողովի պատգամավորներ (համաձայնությամբ): Ազգային հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

3. Հանձնաժողովն ունի տարածքային մարմիններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովներ:

4. Հանձնաժողովը և նրա տարածքային մարմինները գործում են հասարակական հիմունքներով:

ԳԼՈՒԽ VII.

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ)

Հոդված 32. Հաշմանդամների սոցիալական ներառման ռազմավարություն (համալիր ծրագիր)

1. Հաշմանդամների սոցիալական ոլորտի պետական քաղաքականությունն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանված ուղղություններով և ժամկետներում:

2. Ռազմավարության նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն է, նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ապահովելու համար:

3. Ռազմավարությունը ներառում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման, բժշկական, սոցիալական ու հոգեբանական վերականգնման, առողջապահության, տրանսպորտի, հաղորդակցության, կրթության, զբաղվածության, մարդկային ռեսուրսների զարգացման, սոցիալական պաշտպանության և այլ բնագավառներ:

4. Ռազմավարությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Ռազմավարությամբ նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնությունները արտացոլվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տարեկան ծրագրում:

6. Ռազմավարությունը մշակում է լիազորած մարմինը:

Հոդված 33. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տարեկան ծրագիրը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրականացվում են Տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում:

2. Տարեկան ծրագրի նպատակն է հաշմանդամության ոլորտում տարբեր նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից իրականացվող բոլոր միջոցառումները ներկայացնել մեկ ընդհանրական փաստաթղթում՝ դրանց փոխհամաձայնեցված իրականացումը ապահովելու համար:

3. Տարեկան ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի նախագծի կազմում:

4. Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը հերթական տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մասն է:

Հոդված 34. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության 2006թվականի կոնվենցիայի դրույթների իրագործման նկատմամբ մոնիթորինգի իրականացում

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Միավորված Ազգերի Կազմակերպության 2006թվականի կոնվենցիայի դրույթների իրագործման նկատմամբ մոնիթորինգն իրականացնում է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը:

ԳԼՈՒԽ VII.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 35. Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթները խախտելու համար

Սույն օրենքի դրույթների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ԳԼՈՒԽ VIII.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 36. Եզրափակիչ դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից: Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը և 23-րդ հոդվածի 1-ին մասը ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ից, 13-րդ հոդվածի 4-րդ մասը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում և 20-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում (ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից) նշված ուղղություններով միջոցառումների իրականացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի կազմման ժամանակ:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-57 օրենքը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 41.3 հոդվածից (այսուհետ՝ Հոդված) հետո լրացնել նոր 41.4 հոդված հետևյալ բովանդակությամբ.

1) << **41.4** «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված տեղեկատվություն չներկայացնելը և մասհանումներ չկատարելը՝

Գործատուի մոտ առաջացած թափուր աշխատատեղ առաջանալուց հետո մեկ ամսվա ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմին տեղեկատվություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում գործատուի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Գործատուն ազատվում է տուգանքի վճարման պատասխանատվությունից, եթե մեկ ամսվա ընթացքում լիազոր մարմնին չի տեղեկացրել առաջացած թափուր աշխատատեղի մասին, սակայն այդ ժամանակահատվածում թափուր աշխատատեղը համալրել է հաշմանդամություն ունեցող համապատասխան անձով և այդ մասին տեղեկացրել է լիազոր մարմնին:>>:

Մասհանում չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում գործատուի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: